

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵԼԻ ՍՐԲԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հուլիսի 1-ին

ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԵ

Զաքարիա մարգարեի մասին տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, հուլիսի 29-ի՝ «Տասներկու մարգարեներ» շարքում:

Հուլիսի 3-ին

ԵՂԻՍԵ ՄԱՐԳԱՐԵ

Եղիսե մարգարեն ապրել և գործել է Քրիստոսից առաջ Թ դարի երկրորդ կեսին: Եղիսեն Հին Կտակարանի հրաշագործ դեմքերից մեկն է՝ Մովսես մարգարեից հետո, հաջորդն ու աշակերտը Եղիա մարգարեի:

Իր մարգարեության տարիներին Եղիսեն մասնակցում է նաև Իսրայելի հասարակական կյանքին:

Նրա մասին կարդալ Գ Թագ. ԺԹ 16, Դ Թագ. Բ—Թ գլուխները և ԺԳ 14—21 համարները:

Հուլիսի 5-ին

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔՅԱԼ

Պետրոս առաքյալը գլխավորն էր առաքելական դասի մեջ թե՛ խոսքով, թե՛ գործով և թե՛ հեղինակությամբ: Ծնունդով Բեթսայիդա գյուղից էր, արհեստով՝ ձկնորս:

Երբ առաջին անգամ Հիսուսը հանդիպում է Պետրոսին, ասում է. «Հովհանի որդի Սիմոնն ես, դու պիտի կոչվես **Կեփաս»,** որ նշանակում է **վեմ, քար,** հունարեն՝ **պետրոս:**

Երկրորդ անգամ Հիսուսի կողմից կոչվում է **վեմ,** երբ Պետրոսը հայտարարում է, թե Հիսուսը «Մեսիան էր և Որդի Աստուծո»:

Պետրոսը բնակություն է հաստատում Կապառնաումում: Նա բնավորությամբ անմիջական էր, ուղղամիտ: Սակայն ուներ նաև սայթաքումներ: Պետրոսն էր, որ Հիսուսի ձերբակալության գիշերը երեք անգամ ուրացավ նրան:

Պետրոսի մեծագույն գործը եղավ այն, որ աստվածային թելադրանքով և հատուկ տեսիլքով հեթանոսներին ընդունեց Եկեղեցու գիրկը (Գործք Ժ): Իր քարոզության ճանապարհին Պետրոսը Անտիոքից հասնում է Հռոմ և գլխիվայր խաչվելով՝ նահատակվում: Նրա գերեզմանի վրա հետագայում կառուցվում է Հռոմի Ս. Պետրոս նշանավոր եկեղեցին:

Պետրոսը հեղինակն է Նոր Կտակարանի ընդհանրական երկու թղթերի:

ԱՆԴՐԵԱՍ ԱՌԱՔՅԱԼ

Անդրեասը Պետրոս առաքյալի եղբայրն էր և արհեստակիցը: Անդրեասը և Հովհաննես ավետարանիչը նախապես եղել են Հովհաննես Մկրտչի աշակերտները:

Ըստ ավանդության, Անդրեաս առաքյալը եղել է քարոզիչ սկյութացիների և հյուսիսային Հունաստանի: Նահատակվել է Բաթրաս քաղաքում, բազմապատկության նշանի (×) ձևով խաչի վրա, խաչ, որն այդ պատճառով հետագայում կոչվել է Ս. Անդրեասի խաչ:

ՀԱԿՈԲՈՍ ԶԵԲԵԴԵԱՆ ԱՌԱՔԵԱԼ

Հակոբոս առաքյալը կոչվել է նաև Մեծն Հակոբոս, իսկ հայոց մեջ՝ Գլխադիր առաքյալ: Հակոբոսը գալիլիացի ձկնորսապետ Զեբեդեոսի որդին էր, ավագ եղբայրը Հովհաննես Ավետարանչի: Հակոբոս առաքյալի մայրը Ավետարանում հիշատակված Սողոմեն է, Քրիստոսին հետևող կանանցից մեկը:

Հակոբոսը Պետրոսի և իր եղբոր՝ Հովհաննեսի հետ կազմում էին այն սեղմ շրջանակը, որն ավելի էր վայելում Քրիստոսի վստահությունը:

Հակոբոսի մահվան մասին գրված է Գործք Առաքելոցի մեջ (ԺԲ 1—2): Որպես առաքելական խմբի աչքի ընկնող անձնավորություն, 99 թվականին Հերովդեսի հրամանով ձերբակալվում և գլխատվում է: Նա հանդիսանում է առաքելական խմբի առաջին նահատակը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼ

Հովհաննես առաքյալը հանդիսանում է առաքելական խմբի ամենապայծառ ու խոհուն դեմքը: Նրա մեջ ներդաշնակված են նկարագրի երկու հակադիր գծեր՝ եռանդ ու հանդարտություն, քաջություն ու բարություն, մեծություն ու խոնարհություն, սեր ու խստություն: Իր բարեհամբույր բնավորության, նվիրումի և այլ ազնիվ հատկությունների համար արժանացել է Քրիստոսի մասնավոր սիրույն՝ կոչվելով «Սիրելի Աշակերտ»:

Հիսուսի ձերբակալման գիշերը Հովհաննեսը հավատարմորեն հետևեց իր վարդապետի չարչարանաց ողջ գիշերը՝ ուղեկցելով Նրան մինչև Գողգոթա: Այստեղ է, որ Հիսուսն Իր մորը հանձնում է Հովհաննեսին՝ «Սա է մայր քո», իսկ մորը՝ «Սա է որդի քո»:

Հովհաննեսն էր, որ երբ կիրակի առավոտյան լսեց Հիսուսի հարության լուրը, Պետրոսի հետ շտապեց գերեզման և հավատաց Քրիստոսի հարությանը՝ առանց հարուցյալը տեսած լինելու:

Հովհաննես առաքյալը մահացել է 100 թվականին Եփեսոսում, 95 տարեկան հասակում:

Հովհաննեսն է հեղինակը չորրորդ Ավետարանի, կաթողիկե երեք թղթերի և «Յայտնութեան»:

ՄԱՏԹԵՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Մատթեոսը Ալփեոսի որդին էր և Կապիտանաումի մեջ պետական հարկահավաք պաշտոնյա՝ մաքսավոր:

Մի անգամ, երբ Մատթեոսը նստած էր Կապիտանաումի իր մաքսատան մեջ, Հիսուսն անցնում է այնտեղից: Սրտագետն Աստուծո Որդին անմիջապես տեսնում է նրա մեջ առաքելական ատաղձ և, խոսքն ուղղելով նրան, ասում. «Ետևիցս արի»: Մատթեոսը, լսած լինելով Կապիտանաումի մեջ Հիսուսի քարոզների և կատարած հրաշքների մասին, սիրով և պատրաստակամությամբ հետևում է նրան:

Հետագայում Մատթեոսը, նախքան հրաժարվելը իր պաշտոնից և ընկերային շրջապատից, մեծ ընդունելություն է կազմակերպում, որտեղ հրավիրում է Հիսուսին՝ Իր աշակերտներով, և իր բոլոր գործակիցներին: Այս բանը դժգոհության առիթ է ստեղծում դպիրների և փարիսեցիների շրջանում: Սակայն Հիսուսը հանդարտեցնում է նրանց՝ ասելով. «Առողջները բժշկի պետք չունեն, այլ հիվանդները, գնացեք և սովորեք, թե ինչ է նշանակում՝ ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ»: Այնուհետև ավելացնում է. «Ես չեկա արդարները կանչելու, այլ մեղավորները»:

Մատթեոս առաքյալը քարոզության է ուղարկվել Պարսկաստան ու Պարթևաստան, որտեղ և նահատակվել է:

Մատթեոսը հեղինակն է առաջին Ավետարանի:

ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Մեր տոնացույցում հիշատակվում է Բարթողիմեոս կամ Բարթուղիմեոս ձևով, սակայն անվան նախնական ձևն է Բարթոլոմեոս, որ նշանակում է՝ Թոլոմեի որդի: Հայոց առաջին լուսավորիչներ կոչված երկու առաքյալներից մեկն է Բարթողիմեոսը՝ Թադեոս առաքյալի հետ:

Նա Հովհաննու Ավետարանում կոչվում է նաև Նաթանայել (Ա 43—51):

Բարթողիմեոս առաքյալը Պարսկաստանում քարոզելուց հետո մտնում է Հայաստանի սահմանները և Արտաշատում շարունակում իրենից առաջ այդտեղ եկած Թադեոս առաքյալի գործը: Բարթողիմեոսը նույնպես կարողանում է թափանցել արքունիք, ինչպես Թադեոս առաքյալը, և դարձի բերել Սանատրուկի քրոջը՝ Ոգուհի իշխանուհուն, և Զարմայր հազարապետին:

Այնուհետև Ս. Թադեոս առաքյալը քարոզության համար անցնում է Արտազ, իսկ Ս. Բարթողիմեոսը՝ Հեր և Զարևանդ գավառներ և ապա՝ Աղբակ, Վանի գավառներից մեկը, ուր և նահատակվում է: Աղբակի մոտ է գտնվում (այժմյան Բաշ-Կալա) Ս. Բարթողիմեոսի նշանավոր վանքը:

ՓԻԼԻՊՊՈՍ ԱՌԱՔՅԱԼ

Փիլիպպոսը բեթսայիդացի էր, Պետրոսի հայրենակից: Հավանաբար ինքը ևս Հովհաննես Մկրտչի աշակերտներից էր, որ սակայն հետագայում հետևեց Հիսուսին:

Հացերի հրաշքի առթիվ Փիլիպպոսն առաջինն էր, որ Հիսուսի կողմից հարցման ենթարկվեց, թե որտեղի՞ց հաց գտնել՝ այս հսկա բազմությունը կերակրելու համար:

Ապա նա հիշատակվում է հեթանոսների՝ Հիսուսին տեսնելու ցանկության նկարագրության մեջ:

Փիլիպպոսը քարոզել է Փոքր Ասիայում և նահատակվել Հիերեպոլիս քաղաքում՝ խաչելությամբ:

ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔՅԱԼ

Թովմասը ծանոթ է իր թերահավատությամբ: Սակայն նրա մոտ թերահավատությունը բխում է ոչ թե անհավատությունից, այլ իրապաշտությունից: Թովմասը առաքինի և քաջ առաքյալ էր:

Երբ իր ընկեր առաքյալներից տեղեկանում է հարուցյալ Քրիստոսի մասին, Թովմասը թերահավատությամբ է ընդունում այս լուրը և պնդում, թե մինչև չտեսնի աչքով և ձեռքը չխրի Նրա խոցված կողի մեջ, չի հավատա: Իսկ երբ հաջորդ շաբաթ Հիսուսը երևում է իր առաքյալներին վերնատան մեջ, խոսքն ուղղում է Թովմասին և ասում. «Բեր մատներդ և դիր այստեղ, և տես ձեռքերս: Բեր ձեռքդ և մխե կողիս մեջ, ու մի լինիր անհավատ, այլ՝ հավատացյալ»:

Ըստ ավանդության, Թովմասին ուղարկում են հեռավոր երկրներ՝ Պարթևաստան, Հնդկաստան, որտեղ արդարև առաքելական դարերից սկսած գոյություն է ունեցել քրիստոնեական Եկեղեցի: Այս երկրների բնակիչները հավատացած են, որ իրենց նախահայրերը դարձի են եկել Թովմաս առաքյալի քարոզությամբ:

Թովմաս առաքյալը նահատակվել է Մադրաս քաղաքի մոտ՝ նետահարմամբ:

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼ

Թադեոսը հայոց առաջին լուսավորիչն է: Ավետարանում նա կոչվում է Հուդա-Հակոբյան:

Ըստ մեր ազգային պատմության, Թադեոս առաքյալը նախ գալիս է Եդեսիա, որտեղ, Քրիստոսի խոստման համաձայն, բժշկում և քրիստոնյա է դարձնում Աբգար թագավորին: Եդեսիան հետագայում դառնում է քրիստոնեական հնագույն կենտրոններից մեկը:

Թադեոսն այնուհետև իր քարոզությունը շարունակում է դեպի հյուսիս, մտնում է հայոց Սանատրուկ թագավորի տիրության սահմանները և դարձի բերում շատ ու շատ հայերի: Ապա նա թափանցում է արքունիք, դարձի է բերում արքայադուստր Սանդուխտին, որը հետագայում նահատակվում է իր հոր՝ Սանատրուկ թագավորի ձեռքով, Ս. Թադեոս առաքյալի հետ:

Հետագայում Թադեոս առաքյալի գերեզմանի վրա, Արտազում, կառուցվում է փառավոր մի եկեղեցի:

Նա համարվում է առաջին նահատակ առաքյալն ու լուսավորիչը Հայոց աշխարհի:

ՀԱԿՈԲՈՍ, ՇՄԱՎՈՆ ԵՎ ՄԱԴԱԹԻԱ ԱՌԱՔՅԱԼՆԵՐ

Այս երեք առաքյալների մասին Ավետարաններում ոչ մի տեղեկություն չկա: Լոկ հիշատակված են նրանց անունները:

Հակոբոսը ծանոթ է Ալփյան մականունով, որով տարբերվում է Զեբեդյան Հակոբոսից: Կոչվում է նաև՝ Կրտսեր Հակոբոս: Հակոբոսը հավանաբար Ավետարանը տարել է Պաղեստինի հարավային ծովեզերքները և Եգիպտոս, որտեղ և նահատակվել:

Շմավոնը, կամ հունական ձևով՝ Սիմոն, ծանոթ է Ավետարանի մեջ «Կանանացի» մակդիրով, որ նշանակում է՝ «նախանձահույզ»: Այս անունով «աղանդ» կամ «կուսակցություն» գոյություն է ունեցել հրեաների մեջ, որոնք աշխատում էին թոթափել օտար լուծը իրենց վրայից և ասպարեզից վերացնել ուրացողներին ու օտարամոլ հրեաներին:

Շմավոնը նահատակվել է Պարսկաստանում:

Մադաթիան առաքյալների կողմից ընտրվում է մատնիչ Հուդայի փոխարեն, նրա մահից հետո (Գործք. Ա 25—26), որպես մեկը, որը հետևել է Քրիստոսին՝ Նրա մկրտությունից մինչև համբարձումը: Մադաթիան հավանաբար քարոզել է Եթովպիայում:

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ

Վերոհիշյալ տասներկու առաքյալներից բացի հիշատակվում են նաև այլ առաքյալներ: Սրանց շարքում մեծագույնն է համարվում Պողոս առաքյալը, որը ծանոթ է նաև «Տասներեքերորդ առաքյալ» մակդիրով: Նա կոչվել է «Հեթանոսաց առաքեալ»:

Ծնվել է Կիլիկիայի Տարսոն քաղաքում, փրկչական թվականի առաջին տարիներին: Բարձրագույն կրթությունը ստացել է Տարսոնի համալսարանում, իսկ կրոնական լրա-

ցուցիչ դաստիարակությունը՝ Երուսաղեմում:

Պողոսի քրիստոնյա դարձի մասին կարդալ Գործք. Ը 1—40: Պողոսի առաքելական գործունեության և նահատակության մասին կարդալ Գործք ԺԴ—ԻԸ գլուխները:

Պողոսն արհեստով վրանակար էր և հռոմեական քաղաքացի: Նա ձեռներեցությամբ և հավասարապես քարոզում էր հրեական, հունական և հռոմեական շրջանակներում:

Իր քարոզչական առաքելություններից վերադարձին Երուսաղեմ ձերբակալվում է և տարվում Պաղեստինյան Կեսարիա, որտեղ ազատ բանտարկությամբ մնում է երկու տարի: Հռոմեացի դատավորը, չտեսնելով պատժի արժանի ոչ մի հանցանք, Պողոսին, նրա խնդրանքով, տեղափոխում է Հռոմ՝ քանի որ ինքը բողոքել էր կայսեր: Այստեղ նույնպես արդարանալով, ազատ է արձակվում: Ըստ ավանդության, այնուհետև շարունակում է իր քարոզչական գործունեությունը՝ հասնելով անգամ մինչև Իսպանիա:

67 թվականին կրկին վերադառնում է Հռոմ և Ներոնյան հալածանքների շրջանում ձերբակալվում ու սրով նահատակվում:

Պողոս առաքյալը հեղինակն է Նոր Կտակարանում 13 առաքելական ամենակարևոր թղթերի:

Հուլիսի 17-ին

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵ

Ծնվել և համարյա ողջ կյանքն անց է կացրել Երուսաղեմում:

Նա Հին Կտակարանի մեծագույն և ամենաազդեցիկ մարգարեն էր:

Շատ կարևոր արժեք է Եսայիի մարգարեության գիրքը: Եսայի մարգարեն կոչվել է «Նախավետարանիչ» կամ «Ավետարանիչ մարգարե»: Եսային նաև ազնվական մարգարե էր՝ բառի լայն իմաստով: Նա խոսում և պատգամում էր վեհությամբ և հեղինակությամբ, ինչպես վայել էր Աստուծո դեսպանին: Հաճախ նա կոչվել է նաև «դիվանագետ» կամ «քաղաքագետ» մարգարե: Նա շատ հաճախ հայտնում է իր տեսակետը կամ Աստուծո կամքը ազգային կամ միջազգային հարցերի կապակցությամբ: Քանի որ նա սերտ կապերի մեջ է եղել արքունական շրջանակների հետ, ապա շատ հավանական է, որ պատվո մաս կազմած լինի Երուսաղեմի արքունի խորհրդի:

Իր մարգարեական գործունեությունը ծավալել է երեք թագավորների շրջանում՝ Հովաթամի, Աքազի և Եզեկիայի:

Ենթադրվում է, որ Եսային սղոցումով նահատակվել է Մանասե ամբարիշտ թագավորի կողմից:

Հուլիսի 19-ին

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼ ԵՎ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՒՅՍ

Այս մասին տես հուլիսի 5-ի՝ «Տաւներկու առաքյալներ» շարքում:

Հուլիսի 21-ին

ԿԻՊՐԻԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ՀՈՒՍՏԻԱՆԵ ԿՈՒՅՍ

Կիպրիանոսն ապրել և գործել է Գ դարում:

Ըստ Հայսմավուրքի, Կիպրիանոսն Անտիոքի ազնվական և մեծահարուստ անձնավորություններից էր՝ խոր իմաստությամբ և հմուտ՝ մոգության արվեստին:

Նույն քաղաքում էր ապրում նաև մի քուրմի դուստր Հուստիանեն, որ քրիստոնյա դառնալով՝ ճշմարիտ հավատքի է բերում նաև իր ծնողներին:

Հեթանոս մի իշխան առաջարկում է Հուստիանեին՝ ամուսնանալ իր հետ: Վերջինս կտրականապես մերժում է այդ առաջարկը՝ պատճառաբանելով, որ ինքն արդեն իսկ հարսնացած է Քրիստոսին: Իշխանը ստիպված դիմում է Կիպրիանոս մոգին և, մեծագումար ոսկի խոստանալով, խնդրում նրա օգնությունը՝ կախարդությամբ իրեն կապել Հուստիանեին:

Հակառակ այս բանի, Կիպրիանոսն ինքը, ազդվելով Հուստիանեի ցուցաբերած գերբնական զորությունից, քրիստոնյա է մկրտվում և կարճ ժամանակում հասնում եպիսկոպոսական աստիճանի ու իրեն նվիրում քարոզչական առաքելության: Իսկ Հուստիանեն, որ առանձնացել էր վանքի մեջ, ձեռնադրվում է սարկավագուհի:

Դեկոս կայսեր հալածանքների ժամանակ Կիպրիանոսը դատվում և աքսորվում է Նիկոմեդիա-Իզմիտ ու Վաղերիանոսի օրոք՝ գլխատվում: Իսկ Հուստիանե կույսը նետվում է եռացրած տապակի մեջ և նահատակվում:

ԵՎՓԻՄԵ ԿՈՒՅՍ

Եվփիմեն քաղկեդոնացի քրիստոնյա ազնվական ընտանիքի զավակ էր: Իր ողջ կյանքն Աստծուն նվիրելու համար կուսության ուխտ է անում:

Դիոկղետիանոս կայսեր հալածանքների ժամանակ քաղաքի հեթանոս աստվածնե-

ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄ. ՍԵՐ

ից մեկին ի պատիվ կազմակերպվում է մեծ հանդես: Այս հանդեսին հրաժարվում են մասնակցել Եվփիմեն և իր 49 ընկերները, որոնք հանդեսի ընթացքում թաքնվում են մի տան մեջ: Սակայն բոլորը հայտնաբերվում և տարվում են Պրիսկոս փոխքդեշի ատյան, որտեղ իր համարձակախոսությամբ աչքի է ընկնում Եվփիմեն՝ հեթանոսական սույն հանդեսը համարելով սին, սուտ ու սխալ: Հենց տեղում սրախողխող են արվում Եվփիմեի 49 ընկերները, իսկ ինքը ենթարկվում է անլուր չարչարանքների, որոնցից Աստուծո հրաշքով ազատվում է: Այնուհետև նետվում է գազանների մոտ, որտեղ նույնպես Աստուծո զորությամբ անվնաս է մնում: Սակայն Եվփիմեն նախընտրում է մեռնել գազանների ժանիքներից, քան՝ մարդկանց չարությունից, ու խնդրում է Աստծուց, որ գազաններից ընդունի իր մահը: Այդպես էլ լինում է:

Եվփիմեի մարմինը քրիստոնյաների կողմից գաղտնի թաղվում է պատվով:

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՒՅՍ

Քրիստինե կույսը Փյունիկիայի (այժմ՝ Լիբանան) Տուր քաղաքից էր, տեղի կառավարչի դուստրը: Հավանաբար ապրել և գործել է Բ դարում: 12 տարեկան հասակում նրան ծնողներն ընծայում են հեթանոսական աստվածներին: Բարձր աշտարակ կառուցելով և այնտեղ համադրելով ոսկե և արծաթե կուռքերին, հայրն իր դեռատի դստերը կարգում է կուռքերին քրմուհի՝ 12 նաժիշտներով:

Քրիստինեն երկնային ներշնչումով ըմբռնում է քրիստոնեական կրոնի վեհությունը, իսկ դրան հակառակ՝ հեթանոսական աստվածների ոչնչությունը, ընդունում է քրիստոնեություն և, փշրելով կուռքերի թանկարժեք արձանները, վաճառում դրանք և ստացված գումարը բաշխում աղքատներին: Այս բանի համար նա նախ ենթարկվում է ծնողների, ապա պետական դատավորների կտտանքներին, որից և գտնում է իր մահը:

Հուլիս ամսում մեր Եկեղեցին տոնում է նաև հետևյալ սրբերի հիշատակը.

Հուլիսի 22-ին—Սուրբ Աթանագինես եպիսկոպոս և տասն աշակերտներ ու հինգ վկաներ:

Հուլիսի 24-ին—Սուրբ նախահայրեր. Ադամ, Աբել, Սեթ, Ենովս, Ենովք, Նոյ, Մելքիսեդեկ, Աբրահամ, Իսահակ, Հակոբ, Հովսեփ, Մովսես, Ահարոն, Եղիազար, Հեսու, Սամուել, Սամփսոն, Հեփթայի, Բարաք, Գեդեոն և ուրիշներ:

Հուլիսի 29-ին—Տասներկու մարգարեներ. Օվսե, Ամովս, Միքիա, Հովել, Աբդիու, Նաումում, Ամբակում, Հովնան, Սոփոնիա, Անգե, Զաքարիա և Մաղաքիա:

Հուլիսի 31-ին—Սուրբ Սոֆյա և իր երեք դուստրերը՝ Պիստիս, Էլպիս ու Ագապի:

Հուլիսի 26-ին

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՈՐԴԻՆԵՐ ԵՎ ԹՈՌՆԵՐ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Արիստակեսը Ս. Գրիգոր Լուսավորչի կրտսեր որդին էր: Նա շատ վաղ հասակից վարել է վանական կյանք: Եպիսկոպոս է ձեռնադրվել 318 թվականին իր հորից և դարձել նրա գործակիցը: 325 թվականին Հայ Եկեղեցու կողմից մասնակցել է Նիկիայի ժողովին: Արիստակեսը ոչ միայն գործակիցն էր իր հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի, այլև նրա տեղակալը՝ բացակայության ժամանակ:

Ըստ Մովսես Խորենացու, Արիստակեսը սպանվել է Չորրորդ Հայքի Արքեղայոս իշխանի կողմից՝ նրա անուղղելի վարքը քննադատելու համար: Թերևս Խորենացու այս տեսակետը վիճելի է: Իսկ ըստ Փավստոս Բյուզանդի՝ Արիստակեսը իր կյանքը կընքել է խոստովանական մահով:

ՎՐԹԱՆԵՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Վրթանեսը Ս. Գրիգոր Լուսավորչի անդրանիկ որդին էր: Նա կրթություն էր ստացել Կեսարիայում և 333 թվականին փոխարինել Արիստակեսին: Ամուսնությունից ունեցել է երկու զավակներ՝ Գրիգորիս և Հուսիկ:

Անժխտելի է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը ժամանակին հաստատել էր քրիստոնեությունը Հայաստանում, սակայն շատ տեղերում դեռևս գոյություն ուներ հին հավատքը, հատկապես՝ Տարոնում: Այդ պատճառով Վրթանեսը ամեն տարի մեծահանդես պաշտամունք է կազմակերպում Տարոնում՝ դարձի բերելու հեթանոսներին: Այդ գործունեության համար Վրթանեսի վրա հեթանոսների կողմից կատարվում է մահափորձ, սակայն՝ անհաջող:

Վրթանեսը մահացել է 341 թվականին, 79 տարեկան հասակում, և թաղվել Դարանաղյաց գավառի Թորդան ավանում, իր հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի մոտ:

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Գրիգորիսը Վրթանես հայրապետի անդրանիկ որդին էր: Նա Հայ Եկեղեցու կողմից հարևան հեթանոս ազգերի շրջանում քրիստոնեությունը տարածելու մեծ ջանքեր է թափում: Այդ բանի համար էլ հաճախակի ցեղապետների կողմից հանդիպում է մեծ դժվարությունների, երբեմն՝ արգելքների և բռնությունների:

Ըստ ազգային ավանդության, հեթանոս ցեղապետների նկատմամբ կշտամբական դիրք բռնելու համար նրանց կողմից Կասպից ծովի մոտ կապվում է ձիու պոչին և, քարերի ու թփերի մեջ քաշկռտվելով, Վատնյան դաշտում կնքում իր մահկանացուն: Գրիգորիս եպիսկոպոսի մարմինը իր սարկավագների ձեռքով թաղվում է Փոքր Սյունիքի Ամարաս ավանում:

489 թվականին, Աղվանից Վաչագան թագավորի օրոք, Գրիգորիս հայրապետի նշխարների վրա կառուցվում է Ս. Գրիգոր եկեղեցին:

ՀՈՒՍԻԿ ՀԱՅՐԱՊԵՏ

Հուսիկը Վրթանեսի երկրորդ որդին էր, որն ամուսնանում է Տիրան թագավորի դստեր հետ և ունենում երկու զավակներ՝ Պապ և Աթանագինե: Երիտասարդ հասակում ընտրվում է կաթողիկոս:

Մեր եկեղեցական պատմության մեջ Հուսիկը ներկայանում է որպես նախանձախընդիր հայրապետ: Այդ պատճառով Հուսիկ հայրապետի և Տիրան թագավորի միջև գժտություն է առաջանում: Ըստ Մովսես Խորենացու, գժտության պատճառը լինում է այն, որ Տիրանը ցանկանում էր Հուլիանոս Ուրացողի պատկերը կախել եկեղեցում, իսկ այդ բանին խիստ դեմ էր Հուսիկ հայրապետը: Բայց գժտության ավելի հավանական պատճառը համարվում էր այն, որ Հուսիկը խիստ էր վերաբերվում Տիրանի ներքին կյանքին: Դրա համար էլ թագավորը, կաթողիկոսի վերաբերմունքից զայրացած, 347 թվականին, 52 տարեկան հասակում, բրածեծ մահվամբ սպանել է տալիս նրան Ծոփքի Բաբեղ քաղաքում:

Հուսիկ հայրապետի մարմինը թաղվում է Դարանաղյաց գավառի Թորդան ավանում:

ԴԱՆԻԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Հուսիկ հայրապետին հաջորդում է Դանիել Ասորի եպիսկոպոսը որպես տեղապահ, որը հավանաբար, Հուսիկի աշակերտը է եղել և կառավարիչը՝ Տարոնի վանքի: Դանիելը վարում էր սրբակյաց կյանք, հեթանոսների շրջանում քրիստոնեություն էր տարածում, իսկ ծերության ժամանակ ապրում է միայնակյաց կյանք Տարոնի Դրախտ Հացյաց կոչված վանքում:

Դանիել Ասորին արքայի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ խիստ հանդիմանական խոսքեր է ուղղում նրան՝ մեղադրելով արքային Հուսիկ հայրապետի սպանության մեջ: Այս բանի համար թագավորը 348 թվականին խեղդամահ է անել տալիս նրան:

Դանիել եպիսկոպոսի երկու աշակերտներ՝ Եպիփանը և Շաղիտան, նրա մարմինը թաղում են Հարք գավառի Հացյաց Դրախտ ավանում, իր մենարանում:

Հուլիսի 28-ին

ՄԱԿԱԲՅԱՆՆԵՐ

Հովհաննեսի որդի Հուդան իր քաջության և տարած հաղթանակների համար ստանում է **Մակաբեոս** հունական մակդիրը, որ նշանակում է **մրճահար, հարվածահար:** Այս մակդիրն այնուհետև անցնում է իր ընտանիքին, որոնք կոչվում են **Մակաբյաններ:** Այս ընտանիքից են սերված նշանավոր սուրբեր Եղիազար քահանան, Շահումեն և իր յոթ որդիները:

ԵՂԻԱԶԱՐ ՔԱՀԱՆԱ

Հրեաների վրա Անտիոքի Սելևկյան թագավորությունը խիստ ճնշումներ է գործադրում, որի դեմ ընդվզում է ժողովուրդը: Դրանց թվին է պատկանում նաև իննսունամյա Մակաբյան Եղիազար քահանան: Նրան հրապարակավ ստիպում են խոզի միս ուտել, որից կտրականապես հրաժարվում է՝ քաջ գիտենալով հրաժարման հետևանքը:

«Եթե այժմ մեռնեմ քաջաբար, պիտի հաստատեմ, որ արժանի եմ եղել այս երկար տարիքիս, և երիտասարդներին լավ օրինակ պիտի թողնեմ՝ սովորեցնելու համար նրանց, թե ինչպես պետք է մեռնել ուրախությամբ և քաջությամբ մեր սուրբ օրենքների համար», ասում է նա:

Այս խոսքից հետո նրան ենթարկում են անավոր տանջանքների, որից և ստանում է իր նահատակությունը:

ՇԱՄՈՒՆԵ ԵՎ ԻՐ ՅՈԹ ՈՐԴԻՆԵՐԸ

Նույն հալածանքների շրջանին է պատկանում նաև նահատակությունը քաջասիրտ մի կնոջ՝ Շամունեի, և նույնքան համարձակ իր յոթ զավակների:

Սրանց նույնպես թագավորի ներկայությամբ հանում են հրապարակ և ստիպում խոզի միս ուտել: Նրանք բոլորն էլ նախընտրում են մեռնել, քան հակառակ գնալ իրենց հայրենի օրենքներին:

Երկար հորդորներից հետո երբ թագավորը համոզվում է, որ իր ջանքերն իզուր են, հրամայում է ձաղկանքի ենթարկել բոլորին մոր ներկայությամբ՝ սկսելով ավագ որդուց: Մայրը քաջաբար է պահում իրեն այս քստմնեցուցիչ տեսարանին և հորդորում իր նահատակվող որդիներին.

«Ամենայն ինչի Արարիչն է, որ ձևակերպում է մարդուն իր ծննդյան պահից և ծրագրում ծագումը ամեն բանի: Ուստի Նա Իր ողորմությամբ ետ պիտի տա ձեզ ձեր կյանքը և շունչը, քանի որ այժմ դուք Նրա օրենքը ձեր անձերից վեր եք դասում»:

Որդիների նահատակությունից հետո գազանաբար սպանվում է նաև Շամունեն:

Օգոստոսի 2-ին

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՑԻ ԿԱՄ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ

Գրիգոր Նազիանզացին ծնվել է 329 թվականին Կեսարիայի Նազիանզ քաղաքում: Որդին էր Նազիանզ քաղաքի Սուրբ Գրիգոր Սքանչելագործ եպիսկոպոսի: Նա դասընկերն էր Բարսեղ Կեսարացի և Գրիգոր Նյուսացի եղբայրների:

Նազիանզացին վաղ հասակից նվիրվում է ճգնողական կյանքի: Սակայն հայրը, հակառակ որդու կամքի, հրավիրում է նրան իր եպիսկոպոսարան և 362 թվականին կուսակրոն քահանա ձեռնադրում ու նշանակում իրեն օգնական: 372 թվականին Գրիգորը ձեռնադրվում է եպիսկոպոս Սասիմա քաղաքի վրա, որտեղ, սակայն, մեկնելու ոչ մի հնարավորություն չի ունենում, քանի որ ծերացած հոր բոլոր գործերն ընկնում են իր ուսերին: 374 թվականին, հոր մահից հետո, կրկին անցնում է ճգնողական կյանքի: 379 թվականին հրավիրվում է Կ. Պոլիս և 381 թվականին ընտրվում Կ. Պոլսի պատրիարք: Նազիանզացին նախագահում է երկրորդ Տիեզերական ժողովին Կ. Պոլսում: Քանի որ վարչական գործերը հակասում էին իր հոգու ձայնին, ապա մեկ տարի հետո հրաժարվում է իր պաշտոնից և քաշվում իր հորենական կալված ու իրեն նվիրում հայեցողական կյանքի և զբաղվում գրականությամբ:

Գրիգոր Նազիանզացին մահացել է 395 թվականին:

Օգոստոս ամսում մեր Եկեղեցին տոնում է նաև հետևյալ սրբերի հիշատակը.

Օգոստոսի 4-ին—Եվգինեոս, Մակարիոս, Վաղերիոս, Կանդիտոս և Ակյուղաս վկաներ:

Օգոստոսի 5-ին—Անդրե զորավոր և իր բանակը, Կալինիկոս և Դոմետրիոս վկաներ:

Օգոստոսի 7-ին—Անդրիանոս և իր կին Անատոլիա վկայուհի, Թեոդորոս և Եվթյուրոս վկաներ:

Օգոստոսի 30-ին—Թովմա, Հակոբ և Շմավոն առաքյալներ:

Օգոստոսի 26-ին

ՀՈՎԱԿԻՄ ԵՎ ԱՆՆԱ

Հովակիմը և Աննան սուրբ կույս Մարիամի ծնողներն են:

Հովակիմը Դավթի ցեղից էր, բարեպաշտ մի մարդ, իսկ Աննան՝ քահանայական տոհմից, համեստ և երկյուղած մի կին:

Հովակիմը մի անգամ տաճարում զոհ էր մատուցում, ինչպես ուրիշները: Հերթապահ քահանան դիտողություն է անում նրան և պարտադրում, որ նա վերջում գա՝ պատճառաբանելով նրա անզավակ լինելը: Այս խոսքից վիրավորված, Հովակիմը քաշվում է մի լեռ և ճգնում:

Իմանալով ամուսնու հետ կատարվածի մասին, Աննան նույնպես իրեն նվիրում է աղոթքի և ապաշխարանքի:

Անցնում է ժամանակ, և մի օր Աննան, պարտեզում աղոթելիս, տեսնում է, թե ինչպես թռչունները կերակրում են իրենց ձագերին: Սիրտը լցվում է և լալահառաչ դիմում Աստծուն. «Վա՜յ ինձ, թռչուններն անգամ ձագուկներ ունեն, իսկ ես զրկված եմ զավակ ունենալու շնորհից»: Այդ պահին Տիրոջ հրեշտակը երևում է նրան և հայտնում, որ Աստված նրան մի զավակ է շնորհելու: Աննան խոստանում է այդ զավակը նվիրել Աստուծո:

Նույն տեսիլքը ունենում է նաև Հովակիմը, որը, համակ ուրախություն դարձած, վերադառնում է տուն և բազմաթիվ արջառներ ու ոչխարներ նվիրում տաճարին և քահանաներին:

Այնուհետև Աննան հղիանում և ծնում է մի մանուկ՝ լուսափայլ և հրեշտակային Մարիամին, որը հետագայում դառնում է Աստվածամայրը:

ՅՈՒՂԱԲԵՐ ԿԱՆԱՅՔ

Հիսուսի քարոզության ընթացքում Նրան էին հետևում ոչ միայն առաքյալները և աշակերտները, այլև մի շարք կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Մարիամ Կղեով-

պան, Սողոմեն, Հովհաննան և ուրիշներ: Այս կանանց պաշտոնն էր՝ Հիսուսին և Նրա հետևողներին օգնել նյութական ծառայությամբ: Սրանք պատվական ընտանիքի բարեպաշտ կանայք էին, որոնցից ոմանք բուժվել էին չար դևերից և հիվանդություններից: Այս կանանցից ոմանք հետևում են Հիսուսի վերջին ճամփորդությանը Գալիլիայից դեպի Երուսաղեմ և ականատես լինում Ավագ շաբաթվա դեպքերին, հատկապես Նրա խաչելությանը և թաղմանը: Հենց այս կանայք էին Հիսուսի հրաշալի հարության առաջին ավետաբերները: Եկեղեցու կողմից այս կանայք կոչվել են նաև «Յուղաբեր կանայք», քանի որ կիրակի, Քրիստոսի հարության առավոտյան, նրանք փութացել էին գերեզման՝ իրենց պատրաստած անուշահոտ յուղերով օծելու Քրիստոսի մարմինը:

Օգոստոսի 28-ին

ԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԵ

Երեմիան Հին Կտակարանի մեծագույն դեմքերից է: Ծնվել է 650-ական թվականներին Երուսաղեմից ոչ շատ հեռու գտնըվող Անաթովթ գյուղում:

Երիտասարդ հասակից իսկ Երեմիան սրտանց կապվում է մարգարեական իր կոչմանը՝ Աստուծո թելադրանքով. «Ահավասիկ իմ խոսքը դրեցի քո բերանը. ահավասիկ այսօր հեղինակություն տվեցի քեզ ազգերի և թագավորների վրա» (Երեմ. Ա. 4—10):

Երեմիան կանխատեսում է Երուսաղեմի և տաճարի կործանումը՝ որպես հետևանք իր ժամանակի կռապաշտության և ընկերային անարդարությունների: Նա իր համարձակ խոսքի համար բանտարկվում է մի ջրհորի մեջ:

Երեմիայի գրչին են պատկանում Հին Կտակարանի երկու կարևոր գրքերը՝ «Մարգարէութիւն Երեմեայ» (52 գլուխ) և «Ողբք Սրբոյն Երեմեայ մարգարէի» (5 գլուխ), որտեղ հայրենասեր մեծ մարգարեն սրտառուչ ձևով ողբում է իր ժողովրդի գլխին եկած դժբախտություններն ու թշվառությունները, «յետ գերութեանն Իսրայելի և աւերածոյն Երուսաղեմի, նստէր և լայր և ողբայր»: